ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

15 սեպտեմբերի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

116
(3325)

100 դրամ

քաղաք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱԿ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՔՊ-Ի ՀԵՏ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նախօրեին Ազգային ժողով է այցելել վարչապետ Նիկոլ Փաշինյանի տիկին, «Իմ քայլը» հիմնադրամի գործադիր տնօրեն Աննա Հակոբյանը: Նա փակ, աշխատանքային հանդիպում է ունեցել ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների հետ:

Ըստ մեր տեղեկությունների՝ հանդիպմանը ներկա է եղել ՔՊ խմբակցության ամբողջ կազմը: Քննարկման հիմնական թեման եղել է Աննա Հակոբյանի նախաձեռնած՝ ընտանեկան բռնությունը որպես առանձին հանցագործություն քրեականացնելու գաղափարը: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ ՔՊ-ական պատգամավորները Հակոբյանին տարբեր հարցեր են ուղղել, ներկայացրել իրենց մտահոգություններն ու ստացել պատասխաններ: Հանդիպումից հետո, ըստ մեր տեղեկությունների, խմբակցության ներսում ձեւավորվել է այն մոտեցումը, որ Հակոբյանի նախաձեռնությունը պետք է կյանքի կոչվի եւ խորհրդարանում ստանա իշխանական մեծամասնության աջակցությունը:

Բայց ի՞նչ է իրականում առաջարկում Աննա Հակոբյանը:

Հակոբյանը դեռ օգոստոսին հրապարակայնորեն հայտարարել էր, որ Հայաստանի օրենսդրության մեջ անհրաժեշտ է ընտանեկան բռնությունը ճանաչել որպես ինքնուրույն, առանձին հանցագործություն: Նրա ներկայացրած մոտեցմամբ՝ խոսքը միայն գործող օրենքներում տեխնիկական փոփոխությունների մասին չէ: Նախաձեռնության նպատակը, ըստ Հակոբյանի, ավելի ամբողջական եւ տուժողակենտրոն օրենսդրական ու իրավակիրառ մեխանիզմների ստեղծումն է:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ իշխանությունը քննարկում է Վանաձորում նախատեսվող համայնքապետի ընտրությունները հետաձգելու հարցը: Մեր իշխանական աղբյուրների փոխանցմամբ՝ նախնական քննարկումների ժամանակ նախատեսվում էր Վանաձորում համայնքապետի ընտրություն անցկացնել արդեն այս տարվա դեկտեմբերին, ընդ որում՝ ՔՊ-ի հիմնական թեկնածուն Լոռու մարզպետ Արեն Մկրտչյանն էր: Սակայն իշխանության ներսում քննարկումների արդյունքում, ըստ մեր աղբյուրների, այժմ նախընտրելի տարբերակ է դարձել ընտրությունները տեղափոխել 2027 թվական: Պատճառը, ըստ մեր տեղեկությունների, Վանաձորի խոշորացման ծրագիրն է: Բանն այն է, որ կառավարությունը նախատեսում է միավորել Լոռու մարզի գործող Վանաձոր եւ Փամբակ համայնքները՝ ձեւավորելով մեկ խոշորացված համայնք՝ Վանաձոր անվանումով: Նոր համայնքի վարչական կենտրոնը լինելու է Վանաձոր քաղաքը, իսկ միավորված համայնքի կազմում ընդգրկվելու է ընդհանուր 22 բնակավայր: Այս ծրագիրն արդեն միայն իշխանության ներքին քննարկումների մակարդակում չէ: Կառավարությունը հավանություն է տվել համապատասխան օրենսդրական փաթեթին, որով նախատեսվում է իրավական հիմք ստեղծել Վանաձոր եւ Փամբակ համայնքների միավորման համար: Փաթեթով նախատեսվում են նաեւ նոր համայնքի ՏԻՄ-երի ձեւավորման եւ ավագանու ընտրության հետ կապված կարգավորումներ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների՝ առաջիկա համայնքի ղեկավարների ընտրությունների նախապատրաստական աշխատանքներն իշխանության ներսում վստահվել են հիմնականում ՔՊ-ականներ Գեւորգ Պապոյանին եւ Դավիթ Խուդաթյանին: Իշխանական մեր աղբյուրները փոխանցում են, որ վերջիններս գրեթե ամեն օր, այդ թվում՝ շաբաթ եւ կիրակի օրերին, այցելում են տարբեր մարզեր եւ հանդիպումներ անցկացնում ՔՊ-ի տեղական ակտիվի ու համայնքային ներկայացուցիչների հետ: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ Պապոյանն ու Խուդաթյանը վերջին շրջանում եղել են Գեղարքունիքի, Կոտայքի, Սյունիքի, Լոռու եւ այլ մարզերում, որտեղ առաջիկայում նախատեսված են համայնքային ընտրություններ: Հանդիպումները հիմնականում փակ ձեւաչափով են: Նրանց նպատակն է տեղում հասկանալ, թե ՔՊ-ի համար որ թեկնածուներն ունեն հաղթելու առավել մեծ շանսեր, ինչ տրամադրություններ կան համայնքներում եւ ում շուրջ կարող է իշխանությունը ձեւավորել ընտրական թիմը: Իշխանական մեր աղբյուրների փոխանցմամբ՝ մարզերից ստացված տեղեկությունները Պապոյանն ու Խուդաթյանը պարբերաբար զեկուցում են Նիկոլ Փաշինյանին: Իսկ ՔՊ վարչության առաջիկա նիստերի ընթացքում հենց նրանք պետք է ներկայացնեն այն թեկնածուներին, որոնց ընտրությունը, իշխանության հաշվարկով, կարող է ՔՊ-ին ապահովել առավել ուժեղ արդյունք:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում



«Ժողովուրդ» օրաթերթի իշխանական աղբյուրների փոխանցմամբ՝ ՔՊ վերնախավում լուրջ դժգոհություն է առաջացել ԱԺ նախկին պատգամավոր Հայկ Սարգսյանի վերջին հարցազրույցից հետո: Մեր տեղեկություններով՝ հատկապես զայրացած է վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Բանն այն է, որ Հայկ Սարգսյանը իր վերջին հարցազրույցում բավական բաց տեքստով դժգոհել է իր նախկին թիմակիցների վարած քաղաքականությունից՝ անդրադառնալով, մասնավորապես, ԱԺ նախկին նախագահ Ալեն Սիմոնյանի գործունեությանը: Սարգսյանը խոսել է նաեւ այն մասին, որ Սիմոնյանի վարած քաղաքականության պատճառով ինքը չի կարողացել առաջ տանել մի շարք նախագծեր, ինչպես նաեւ անդրադարձել է ՔՊ ներսում իր ունեցած հարաբերություններին եւ նախկին գործընկերների հետ տարաձայնություններին: Իշխանական մեր աղբյուրների փոխանցմամբ՝ ՔՊ վերնախավում Սարգսյանի այս պահվածքը, մեղմ ասած, չեն ընդունում: Ըստ մեր աղբյուրների՝ կուսակցության ներսում գերակշռող տեսակետն այն է, որ Հայկ Սարգսյանին նախկինում բազմաթիվ բաներ ներվել են, իսկ Փաշինյանը նրան, ըստ էության, հնարավորություն էր տվել հեռու մնալ քաղաքական ակտիվությունից եւ «հանգստանալ»: Սակայն Սարգսյանի վերջին հայտարարությունները, իշխանական շրջանակների գնահատմամբ, արդեն անցել են թույլատրելիի սահմանը:

⇨ *էջ 4*

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՏԻԳՐԱՆԱՇԵՆԸ ՊԱՐԶԱՊԵՍ ՏԱՐԱԾՔ ՉԷ»

Տիգրանաշենի շուրջ վերջին շրջանում ակտիվացած հանրային քննարկումների եւ մտահոգությունների վերաբերյալ ArmLur.am-ը զրուցել է «Լույսի բանակ» ռազմահայրենասիրական կազմակերպության նախագահ Կարեն Արայանի հետ:

- Այսօր մեր հարցազրույցի ամբողջ ընթացքում զրուցենք բացառապես Տիգրանաշենի մասին: Լրագրողների հետ հարցուպատասխանի ժամանակ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ նրանք, ովքեր ասում են «Տիգրանաշեն», պատերազմի կոչ են անում Ադրբեջանի դեմ: Ավելի վաղ՝ օգոստոսի 20-ին, նա նաեւ նշել էր, որ Արծվաշենը հայկական է, իսկ Քյարքին՝ ոչ: Սա ինչի՞ մասին է խոսում: Ի՞նչ ենթատեքստեր եք այստեղ տեսնում եւ ի՞նչ զարգացումներ եք կանխատեսում:

- Նիկոլ Փաշինյանը, իմ գնահատմամբ, վախի վրա հիմնված քաղաքականության կրողն է եւ հայրենիքի չճանաչման մի ամբողջ բանաձեւ է առաջ տանում: Այստեղ ես տեսնում եմ մի պարզ բան. կամ Նիկոլ Փաշինյանը շատ կողմնակիցներ կունենա, կամ ես՝ իմ դիրքորոշմամբ, իմ տեսակով, որպես հայ:

Իհարկե, խոսքը միայն իմ անհատական դիրքորոշման մասին չէ: Բայց այսօր մեր երկրում շատ որոշումներ անհատապես են կայացվում, այդ թվում՝ այնպիսիք, որոնք, ըստ Սահմանադրության, պետք է ժողովրդի մասնակցությունը ենթադրեն: Ես ստորգրահավաքի մասին չեմ խոսում, խոսում եմ հանրաքվեի մասին: Ժողովրդի ձայնը պետք է լինի:

Եթե հարցը վերաբերում է Հայաստանի տարածքային ամբողջականությանը եւ մեր երկրի ապագային, ժողովուրդը պետք է որոշի: Չի կարող մեկ մարդ որոշել՝ սա մերն է, սա մերը չէ, սա պետք է հանձնենք, սա՝ ոչ:

Ինձ համար այս հարցն այլեւս պարզապես քաղաքական դիրքորոշման կամ սոցիալական որեւէ խնդրի հարց չէ: Սա մեր լինել-չլինելու հարցն է: Եւ ամենամեծ ցավն այն է, որ ազգաբնակչության մեծ մասը դեռեւս չի գիտակցում:

-Իսկ ի՞նչ ռազմական նշանակություն ունի Տիգրանաշենը Հայաստանի համար: Տիգրանաշենի հարցը միայն քաղաքական եւ տարածքային հարց է՞, թե՞ ավելի մեծ նշանակություն ունի:

- Որպեսզի մարդիկ ավելի պարզ հասկանան Տիգրանաշենի կարեւորությունը, ես չեմ վախենա համեմատություն անել Արցախի հետ: Այո՛, Արցախը դարպաս էր, Արցախը սիրտ էր, Արցախը չափազանց կարեւոր տարածաշրջան էր: Բայց Արցախի կորստով Հայաստանի Հանրապետության գոյությունը, իմ գնահատմամբ, այնքան վտանգված չէ, որքան կարող է վտանգվել Տիգրանաշենի կորստով:

Տիգրանաշենի դիրքը շատ կարեւոր է: Այն ազդեցություն ունի Հայաստանի ներքին կապերի, ընդհանուր տարածքի պահպանության, ռազմական եւ քաղաքական անվտանգության վրա: Մենք խոսում ենք այսօրվա փոքրացած Հայաստանի Հանրապետության մասին, եւ այդ փոքր տարածքում յուրաքանչյուր նման հատվածի նշանակությունը պետք է շատ լուրջ գնահատել:

Տիգրանաշենը պարզապես մի փոքրիկ տարածք չէ: Դրա նշանակությունը շատ ավելի մեծ է, քան մարդիկ պատկերացնում են:

- Դուք բավական կոշտ ձեւակերպումներ եք օգտագործում: Ասում եք՝ եթե Տիգրանաշենը հանձնվի, դա կարող է դառնալ Հայաստանի վերջի սկիզբը: Ի՞նչ նկատի ունեք:

- Ես ուզում եմ ուղիղ դիմել բոլորին՝ սկսած Նիկոլ Փաշինյանից, եթե նա մտադիր է Տիգրանաշենը հանձնել:

Ես ուզում եմ ասել՝ դա Ոսկեպարը չէ, դա Կիրանցը չէ: Տիգրանաշենի հարցը, իմ համոզմամբ, լինելու է կամ Հայաստանի նոր սկիզբը, կամ Հայաստանի վերջը՝ Նիկոլ Փաշինյանի քաղաքականության պայմաններում:

Սա այն հարցը չէ, որը կարելի է պարզապես քննարկել ու հետո որոշել՝ հանձնել, թե չհանձնել: Եթե Տիգրանաշենը հանձնվի, դրա համար պատասխանատուները շատ ծանր քաղաքական հետեւանքների են բախվելու:

Եւ ես ասում եմ՝ այդ հարցը չի փակվելու: Մի օր գալու է այն պահը, երբ բոլորը՝ դուք, ես, Նիկոլ Փաշինյանը, Իլհամ Ալիեւը, տեսնելու են, որ Տիգրանաշենի հարցն ուղղակի տարածքային հարց չէ: Դա Հայաստանի գոյության հարց է:

- Բայց ի՞նչ եք անելու, որպեսզի Տիգրանաշենը չհանձնվի: Ինչպե՞ս եք պատրաստվում խոչընդոտել այդ գործընթացին:

- Նախ պետք է հստակ տարանջատենք սահմանազատման գործընթացը Տիգրանաշենի հարցից:

Ես ցանկացած օրինական սահմանազատման գործընթացի կողմնակից եմ: Բայց այն, ինչ այսօր ներկայացվում է որպես սահմանազատում, ես այդպես չեմ գնահատում:

Սահմանազատումը չի կարող լինել այնպես, որ երկու կողմերը՝ Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարները, պարզապես իրար հետ որոշեն, թե որ տարածքը ում պետք է պատկանի:

Ինձ համար այստեղ հիմնական խնդիրն այն է, որ գործընթացը պետք է լինի իրավական, հիմնավորված եւ Հայաստանի շահերը պաշտպանող:

- Այսինքն՝ Դուք կարծում եք, որ ներկայիս գործընթացը սահմանազատում չէ՞:

- Ես հենց դա եմ ասում: Սա այն գործընթացը չէ, որը ես կարող եմ ընդունել որպես իրական սահմանազատում:

Եթե մենք խոսում ենք սահմանազատման մասին, պետք է լինի իրավական հիմք, պետք է հաշվի առնվեն բոլոր հանգամանքները եւ Հայաստանի շահերը: Չի կարող լինել այնպիսի մոտեցում, որ ամեն ինչ, ինչ պահանջում է Ադրբեջանը, ավտոմատ կերպով ընդունվում է:

Նույնը վերաբերում է Արծվաշենին: Դուք լո՞ւրջ պատկերացնում եք, որ Նիկոլ Փաշինյանը կարող է Ադրբեջանից պահանջել՝ «մեր Արծվաշենը տուր»: Երբ դու արդեն զիջումների ես գնացել, երբ դու կռացել ես, հետո շատ դժվար է սեփական հողի նկատմամբ պահանջատեր լինել:

Իմ հիմնական ասածը շատ պարզ է. յուրաքանչյուր բան, որը պատկանում է ինձ, ես դրա համար պայքարելու եմ:

- Բայց Նիկոլ Փաշինյանն ասում է, որ «Տիգրանաշեն» անվանումը օգտագործողները պատերազմի կոչ են անում Ադրբեջանի դեմ: Ինչպե՞ս եք արձագանքում այս հայտարարությանը:

-. Ես կարծում եմ՝ սա շատ վտանգավոր մոտեցում է: Երբ սեփական երկրի տարածքի նկատմամբ պահանջատիրությունը ներկայացվում է որպես պատերազմի կոչ, դա նշանակում է, որ մենք մեր իսկ հայրենիքի նկատմամբ ունեցած իրավունքն ենք սկսում դիտարկել որպես վտանգավոր երեւույթ:

Ես չեմ ասում, որ պետք է պատերազմ սկսել: Ես ասում եմ՝ այն, ինչը պատկանում է մեզ, մենք պետք է ճանաչենք որպես մեր տարածք եւ դրա համար պետք է պայքարենք:

Ես չեմ ընդունում այն տրամաբանությունը, ըստ որի՝ սեփական հողը հայկական անվանելը կարող է համարվել պատերազմի դրդում:

Եւ վերջում կրկնում եմ՝ յուրաքանչյուր բան, որը պատկանում է ինձ, ես դրա համար պատերազմի պատրաստ եմ: Սա նշանակում է ոչ թե պատերազմի ձգտում, այլ սեփական հայրենիքի համար պատասխանատվություն:

- Բայց նույնպիսի հայտարարություններ նախկինում էլ ենք լսել: Երբ Արցախն էր վտանգված, շատերը հայտարարում էին, որ Արցախը չենք կորցնելու, պայքարելու ենք: Կիրանցի եւ այլ սահմանային հատվածների դեպքում եւս նման հայտարարություններ հնչեցին: Հիմա Տիգրանաշե՞նն է:

- Տեսեք, Արցախի պատերազմի ժամանակ ես քաղաքականությամբ չէի զբաղվում: 2020 թվականի սեպտեմբերի 27-ին, երբ սկսվեց պատերազմը, ես քաղաքական գործունեություն չէի իրականացնում: Ես պարզապես գնացի պատերազմ՝ որպես հայ, որպես հայ տղամարդ:

Այդ պատճառով ես իմ նախկին հայտարարությունների համար պատասխանատվություն եմ կրում: Բայց ինձ չի կարելի համեմատել մարդկանց հետ, որոնք տարբեր տարիներին տարբեր հայտարարություններ են արել եւ հետո չեն տեր կանգնել իրենց խոսքին:

Նիկոլ Փաշինյանը նույնպես տարբեր տարիների շատ բան է ասել: Աննա Հակոբյանը 2018 թվականին տարբեր հայտարարություններ էր անում Արցախի մասին: Շատերն են շատ բան ասել:

Բայց բոլոր հայտարարություններն իրար հետ համեմատելը ճիշտ չէ: Ես իմ խոսքի համար պատասխանատու եմ եւ իմ ասածի տերը լինելու եմ:

- Այսինքն՝ եթե Նիկոլ Փաշինյանը շարունակի պնդել, որ Տիգրանաշենի հարցը պետք է դիտարկել սահմանազատման համատեքստում, Դուք ի՞նչ եք անելու:

- Ես նորից ասում եմ՝ օրինական սահմանազատմանը ես դեմ չեմ: Բայց Հայաստանի տարածքի հաշվին որեւէ գործընթաց, որը ներկայացվում է որպես սահմանազատում, ես չեմ ընդունում:

Տիգրանաշենի հարցը մեզ համար պետք է լինի սկզբունքային: Մենք պետք է հասկանանք դրա նշանակությունը, չթույլատրենք, որ այն ներկայացվի որպես սովորական փոքր տարածքի հարց:

Տիգրանաշենը պարզապես տարածք չէ: Դա Հայաստանի անվտանգության եւ գոյության հարցերից մեկն է: Եվ այս հարցում ես իմ դիրքորոշումից չեմ հրաժարվելու:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԹԵԺ ՊԱՅՔԱՐ

«Ժողովուրդ» օրաթերթի իշխանական աղբյուրների փոխանցմամբ՝ երկարատեւ քննարկումներից հետո իշխանության վերնախավում, կարծես թե, որոշում է կայացվել Կոտայքի մարզպետի թեկնածուի հարցում: Մեր տեղեկություններով՝ իշխանությունը կանգ է առել ՏԿԵ փոխնախարար Առնակ Ավետիսյանի թեկնածության վրա:

ArmLur.am-ի աղբյուրների փոխանցմամբ՝ առաջիկա օրերին թեկնածությունը պետք է ներկայացվի ՔՊ վարչությանը, որտեղ էլ նախատեսվում է քննարկել եւ հաստատել նրան Կոտայքի մարզպետի պաշտոնում առաջադրելու հարցը: Միեւնույն ժամանակ, իշխանական շրջանակներում իրավիճակը բավական լարված է: ArmLur.am-ի աղբյուրների փոխանցմամբ՝ ՔՊ-ում Կոտայքի մարզի կառավարման հարցի շուրջ ամիսներ շարունակ լուրջ տարաձայնություններ են եղել: Կուսակցության ներսում, ըստ մեր տեղեկությունների, ձեւավորվել են երկու հիմնական թեւեր, եւ կողմերը երկար ժամանակ չեն կարողացել համաձայնության գալ, թե որ հատվածի թեկնածուն պետք է ստանձնի մարզի կառավարումը:

Թեման առավել զգայուն է դարձել նաեւ այն պատճառով, որ Կոտայքի մարզում հոկտեմբերի 25-ին սպասվում են մի շարք կարեւոր համայնքային ընտրություններ: Մասնավորապես, ընտրություններ են նախատեսված Հրազդանում, Աբովյանում, Ծաղկաձորում եւ Արզնիում:

Այսպիսով, Կոտայքի մարզպետի պաշտոնի շուրջ որոշումը ՔՊ-ի համար միայն կադրային նշանակություն չունի. այն կարող է անմիջական ազդեցություն ունենալ նաեւ առաջիկա համայնքային ընտրությունների ընթացքի եւ իշխանության՝ մարզում ունեցած դիրքերի վրա:

Ս. Գ.

ՆՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Եվրոպական հանձնաժողովը մշակում է նոր իրավական միջոցառումներ՝ ԵՄ երկրներին արագ արձագանքելու համար միգրանտների զանգվածային հոսքերին, գրում է Լուրեր.com-ը: Նախատեսվում են մարդկանց խմբերի համակարգված վերադարձը եւ ապաստանի դիմումների կասեցման իրավական ուղեցույցը: ԵՀ նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը հայտարարելու է այս նախաձեռնությունների մասին սեպտեմբերի 16-ին՝ իր ամենամյա ելույթի ժամանակ: Եվրոպական հանձնաժողովը (ԵՀ) մշակում է նոր իրավական միջոցառումներ, որոնք նախատեսված են ԵՄ երկրներին օգնելու ավելի արագ արձագանքել միգրանտների հանկարծակի զանգվածային հոսքի դեպքում, հաղորդում է Politico-ն՝ հղում անելով աղբյուրներին: Աղբյուրների համաձայն՝ նախաձեռնությունները կարող են ներառել մարդկանց խմբերի համակարգված վերադարձը: Հրատարակությունը հաղորդում է, որ ԵՀ նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը կարող է այս ծրագրերի մասին հայտարարել սեպտեմբերի 16-ին՝ իր ամենամյա ելույթի ժամանակ: Ֆոն դեր Լայենը «խմբային արտաքսումների» գաղափարը բարձրացրել է անցյալ շաբաթ ԵՄ դեսպանների հետ ճաշի ժամանակ եւ ներկաներից ստացել է «ընդհանուր առմամբ դրական արձագանք», Politico-ին հայտնել է աղբյուրը: Աղբյուրի համաձայն՝ ԵՀ-ն նաեւ իրավական ուղեցույց կտրամադրի այն մասին, թե երբ երկրները կարող են կասեցնել ապաստանի դիմումները որոշակի հանգամանքներում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՊԵՏՔ Է ԱՆՀԱՊԱՂ ՀԵՌԱՆԱ

Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկին հայտարարել է, որ երկրի գլխավոր դատախազ Ռուսլան Կրավչենկոն պետք է անհապաղ հեռանա պաշտոնից:

«Այս գլխավոր դատախազն ունի միայն մեկ ճանապարհ՝ պաշտոնից հեռանալը: Հենց դա էլ ես նրան ասել եմ: Ուկրաինան տեսել է բոլոր պատճառները: Եթե նա դա համարում է քաղաքական ճնշում, թող այդպես էլ անվանի: Կոչ եմ անում խորհրդարանականներին անհապաղ աջակցել այս պաշտոնանկությանը»,- «Արմենպրես»-ի փոխանցմամբ, գրել է նա Telegram-ի իր ալիքում՝ անդրադառնալով գլխավոր դատախազի՝ առավոտյան արած հայտարարությանը քաղաքական ճնշման վերաբերյալ:

Ուկրաինայի գործող գլխավոր դատախազ Ռուսլան Կրավչենկոն հրաժարականի դիմում է ներկայացրել սեպտեմբերի 7-ին, սակայն այն դեռեւս հաստատված չէ: Զելենսկին պետք է Գերագույն ռադա ներկայացնի նրա պաշտոնանկության վերաբերյալ առաջարկություն: Դրանից հետո փաստաթուղթը պետք է հաստատի համապատասխան հանձնաժողովը, այնուհետեւ հարցը կդրվի պատգամավորների ընդհանուր քվեարկության: Փաստաթուղթը դեռեւս խորհրդարանում գրանցված չէ:

Կրավչենկոն հրաժարականի դիմումը ներկայացրել է հերթական խոշոր կոռուպցիոն սկանդալի ֆոնին՝ Ուկրաինայի ազգային հակակոռուպցիոն բյուրոյի գործողությունից ընդամենը երեք օր անց: Դրա ընթացքում բացահայտվել էր հանցավոր կազմակերպություն, որը, ըստ քննության, աջակցում էր խարդախ զանգերի կենտրոնների գործունեությանը:

Սեպտեմբերի 6-ին գլխավոր դատախազը հրապարակայնորեն հերքել էր այդ սխեմաների հետ իր առնչությունը: Նրա խոսքով՝ կասկածվող աշխատակիցը հեռացվել էր պաշտոնից, իսկ համապատասխան ստորաբաժանման գործունեությունը հանձնարարել էր ստուգել:

РБК-Украина-ի հաղորդմամբ՝ սեպտեմբերի 8-ին Զելենսկին առանձին հանդիպում էր ունեցել Կրավչենկոյի, ինչպես նաեւ Ուկրաինայի ազգային հակակոռուպցիոն բյուրոյի ղեկավարի հետ: Հենց այդ հանդիպումից հետո գլխավոր դատախազը պաշտոնից ազատվելու դիմում էր ներկայացրել:

Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 9-ին, պաշտոններից հեռացվել էին նաեւ դատախազության եւս երեք բարձրաստիճան պաշտոնյաներ՝ գլխավոր դատախազի առաջին տեղակալը եւ երկու մարզային դատախազությունների ղեկավարներ:

Հրաժարական ներկայացրած Կրավչենկոն հաստատել է, որ ներկայում գտնվում է արտերկրում:

«Այժմ գտնվում եմ արտերկրյա գործուղման մեջ»,- գրել է նա Telegram-ի իր ալիքում:

Կրավչենկոյի խոսքով՝ նախատեսված են մի շարք հանդիպումներ, որոնց ընթացքում նա մտադիր է միջազգային գործընկերներին տեղեկացնել հակակոռուպցիոն մարմինների համակարգում առկա իրական իրավիճակի, այդ մարմինների կողմից չվերահսկվող ազդեցության կենտրոնացման նշանների եւ այն ռիսկերի մասին, որոնք նման գործելակերպը ստեղծում է պետական ինքնիշխանության համար:

ԻՆՉ ՈՒՆԻ

19.4 ՄԼՆ ԴՐԱՄ ԵԿԱՄՈՒՏ, 2 ՄԼՆ ԴՐԱՄ ԿԱՆԽԻԿ

ArmLur.am-ի ուշադրության կենտրոնում կրկին դատավորներն են եւ նրանց ունեցվածքը: ArmLur.am-ը շարունակում է ուսումնասիրել դատավորների կողմից ներկայացված գույքի, եկամուտների, դրամական միջոցների եւ պարտավորությունների վերաբերյալ հայտարարագրերը՝ հանրությանը ներկայացնելով, թե ինչ ունեն նրանք:

Այս անգամ ուսումնասիրել ենք Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Սամվել Մատինյանի՝ 2025 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագիրը: Սամվել Մատինյանը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի պաշտոնը զբաղեցնում է 2023 թվականի մայիսի 26-ից:

Անշարժ գույք

Հայտարարագրի համաձայն՝ 2025 թվականի սկզբում Սամվել Մատինյանն ունեցել է Երեւանի Արաբկիր վարչական շրջանում գտնվող բնակարանի 1/3 բաժինը: Բնակարանը ձեռք է բերվել 2022 թվականի հունիսի 24-ին: Տարվա ընթացքում նոր անշարժ գույք ձեռք չի բերել եւ գույք չի օտարել: Տարեվերջին նույն բնակարանի 1/3 բաժինը պահպանվել է:

Ավտոմեքենա

Հայտարարագրում 2025 թվականի սկզբի կամ տարեվերջի դրությամբ դատավորի անունով սեփական տրանսպորտային միջոց նշված չէ: Սակայն Սամվել Մատինյանը հայտարարագրել է, որ տարվա ընթացքում 90 եւ ավելի օր փաստացի տիրապետել է 2009 թվականի արտադրության Toyota ավտոմեքենայի:

Դրամական միջոցներ

Բանկային հաշիվներում դատավորը տարվա սկզբում ունեցել է 19,902 դրամ, 72,327.4 դրամ եւ 999,887.7 դրամ: Տարվա վերջին այդ հաշիվների մնացորդները կազմել են համապատասխանաբար 6,492 դրամ, 0 դրամ եւ 812,165 դրամ:

Բացի այդ, Սամվել Մատինյանը հայտարարագրել է 2,000 ԱՄՆ դոլար եւ 2,000,000 դրամ կանխիկ գումար: Տարվա սկզբի եւ վերջի դրությամբ այդ գումարների չափը չի փոխվել:

Եկամուտ

2025 թվականին Սամվել Մատինյանի հայտարարագրած ընդհանուր եկամուտը կազմել է 19,489,144 դրամ:

Դրանից 15,443,299 դրամը աշխատանքի վարձատրություն եւ դրան հավասարեցված այլ վճարումներ են՝ ստացված ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտից: Եւս 4,045,845 դրամը կազմել է ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված եկամտային հարկի վերադարձը:

Դատավորի հայտարարագրում առկա է նաեւ 5,910,744 դրամ վարկի մայր գումարի մնացորդ:

Այսպիսով, ArmLur.am-ը շարունակում է ներկայացնել դատավորների հայտարարագրերը՝ փորձելով հանրությանը հասանելի դարձնել նրանց հայտարարագրած ունեցվածքի, եկամուտների, դրամական միջոցների եւ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տվյալները:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀԵՏԱՁԳՎԵԼ Է

Իրանի եւ Պարսից ծոցի երկրների արտաքին գործերի նախարարների՝ սեպտեմբերի 14-ին Օմանում նախատեսված հանդիպումը հետաձգվել է՝ «համաձայնության հասնելու շահերից ելնելով»: «Արմենպրես»-ի փոխանցմամբ, այս մասին հայտնել է Օմանի արտաքին գործերի նախարար Բադր ալ-Բուսայիդին:

«Համաձայնության հասնելու շահերից ելնելով՝ Սալալայում վաղը նախատեսված տարածաշրջանային հանդիպումը հետաձգվել է: Մենք շարունակում ենք հավատարիմ մնալ երկխոսության զարգացմանը, որը կնպաստի մեր տարածաշրջանում կայունության եւ երկարաժամկետ համագործակցության ամրապնդմանը»,- գրել է նախարարը X-ում:

Իրանի արտաքին գործերի նախարարությունը հայտնել է, որ Պարսից ծոցի երկրների եւ Իրանի ԱԳ նախարարների հանդիպումը հետաձգվել է Թեհրանի եւ Մասկատի համաձայնությամբ: Իրանական կողմի տվյալներով՝ միջոցառման հետաձգումը խնդրել են «տարածաշրջանի որոշ երկրներ»: Հանդիպման նոր ժամկետը չի նշվում:

Հանդիպումը պետք է անցկացվեր Պարսից ծոցի տարածաշրջանի երկրների արտաքին գործերի նախարարների մակարդակով: Սեպտեմբերի 11-ին Իրանի արտաքին գործերի նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Էսմայիլ Բաղային հաստատել էր, որ հանդիպմանը կմասնակցի նաեւ իրանական կողմը:

Նրա խոսքով՝ տարածաշրջանային հարցերից բացի, հանդիպման ընթացքում նախատեսվում էր քննարկել նաեւ Իրանի եւ Օմանի բանակցությունների արդյունքները՝ Հորմուզի նեղուցում առեւտրային նավագնացության համար անվտանգ երթուղիների որոշման շուրջ:

Հորմուզի նեղուցով նավագնացությունը արգելափակված է փետրվարի 28-ից շարունակվող ԱՄՆ-Իրան հակամարտության պատճառով:

ՄԻՔՈՒԿԱՅԻՆ ՔԵՆՔԻՑ ՎՏԱՆԳԱՎՈՐ

Արհեստական բանականության զարգացման տեմպերը դանդաղեցնելու շուրջ քննարկումների ֆոնին ամերիկացի ձեռնարկատեր Իլոն Մասկը հիշեցրել է, որ դեռ 12 տարի առաջ զգուշացրել էր՝ արհեստական բանականությունը կարող է ավելի վտանգավոր լինել, քան միջուկային զենքը, գրում է shantnews.am-ը:

Տասներկու տարի առաջ՝ պատասխանել է Մասկը 2014 թվականի իր այն գրառմանը, որում ընդգծել էր, թե արհեստական բանականությունը «պոտենցիալ առումով ավելի վտանգավոր է, քան միջուկային զենքը»:

Շաբաթ օրը Anthropic-ի գործադիր տնօրեն Դարիո Ամոդեյը կոչ է արել դանդաղեցնել ավելի հզոր արհեստական բանականության մոդելների մշակումը՝ անվտանգության հետ կապված մտահոգությունների պատճառով: Ավելի ուշ Իլոն Մասկը համաձայնություն է հայտնել ԱԲ-ի զարգացումը դանդաղեցնելու վերաբերյալ նրա առաջարկին:

Ավելի վաղ Anthropic-ի հետազոտող Զեյքոբ Քոքսոնը հայտարարել էր արհեստական բանականության ոլորտից հեռանալու մասին՝ վախենալով, որ տեխնոլոգիական կորպորացիաների միջեւ ընթացող մրցավազքն աշխարհը մոտեցնում է «անվերադարձ կետի» եւ կարող է հանգեցնել ապոկալիպտիկ սցենարի արդեն 2027 թվականի վերջին:

ՈՉՆՉԱՑՐԵԼ ԵՆ ԱՆՕԴԱՉՈՒ ՆԱՎԱԿ

Ռուսաստանի Սեւծովյան նավատորմի ուժերը Սեւ ծովի ջրատարածքում ոչնչացրել են Ուկրաինայի զինված ուժերի անօդաչու նավակ: Այս մասին հայտնել է ՌԴ պաշտպանության նախարարությունը՝ իր ամենօրյա ամփոփագրում:

Գերատեսչության հաղորդմամբ՝ խոցված նավակը եղել է առանց անձնակազմի եւ ոչնչացվել է Սեւ ծովում: Դեպքի վայրի եւ գործողության այլ մանրամասներ նախարարությունը չի ներկայացրել:

Ավելի վաղ ՌԴ ՊՆ-ն հայտնել էր նաեւ Կիեւում «Կիեւստար» ընկերության շենքին հարվածի մասին՝ պնդելով, որ ընկերության կապի եւ ինտերնետային ծառայություններն օգտագործվել են նաեւ Ուկրաինայի զինված ուժերի շահերի համար:

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

Ի՞ՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի իշխանական աղբյուրների փոխանցմամբ՝ ՔՊ վերնախավում լուրջ դժգոհություն է առաջացել ԱԺ նախկին պատգամավոր Հայկ Սարգսյանի վերջին հարցազրույցից հետո: Մեր տեղեկություններով՝ հատկապես զայրացած է վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Բանն այն է, որ Հայկ Սարգսյանը իր վերջին հարցազրույցում բավական բաց տեքստով դժգոհել է իր նախկին թիմակիցների վարած քաղաքականությունից՝ անդրադառնալով, մասնավորապես, ԱԺ նախկին նախագահ Ալեն Սիմոնյանի գործունեությանը: Սարգսյանը խոսել է նաեւ այն մասին, որ Սիմոնյանի վարած քաղաքականության պատճառով ինքը չի կարողացել առաջ տանել մի շարք նախագծեր, ինչպես նաեւ անդրադարձել է ՔՊ ներսում իր ունեցած հարաբերություններին եւ նախկին գործընկերների հետ տարաձայնություններին:

Իշխանական մեր աղբյուրների փոխանցմամբ՝ ՔՊ վերնախավում Սարգսյանի այս պահվածքը, մեղմ ասած, չեն ընդունում: Ըստ մեր աղբյուրների՝ կուսակցության ներսում գերակշռող տեսակետն այն է, որ Հայկ Սարգսյանին նախկինում բազմաթիվ բաներ ներվել են, իսկ Փաշինյանը նրան, ըստ էության, հնարավորություն էր տվել հեռու մնալ քաղաքական ակտիվությունից եւ «հանգստանալ»: Սակայն Սարգսյանի վերջին հայտարարությունները, իշխանական շրջանակների գնահատմամբ, արդեն անցել են թույլատրելիի սահմանը:

Ավելին՝ մեր աղբյուրների փոխանցմամբ՝ իրավապահ համակարգին հանձնարարված է Սարգսյանի վերջին հարցազրույցում հնչեցրած մի շարք հայտարարություններ ուսումնասիրել, քրեական վարույթներ նախաձեռնել: Խոսքը, մասնավորապես, նրա այն պնդման մասին է, որ տարբեր ընկերություններից որոշ նախագծեր «մեյլով» հասել են Ալեն Սիմոնյանին:

Այս թեմայի առնչությամբ, ArmLur.am-ի տեղեկություններով, արդեն քրեական վարույթ է իրականացվել: Այժմ, ըստ իշխանական աղբյուրների, փորձ է արվում պարզել, թե կոնկրետ ինչի մասին էր խոսում Հայկ Սարգսյանը, ինչ նախագծերի մասին էր խոսքը, որ ընկերություններից են դրանք ներկայացվել եւ ինչ ճանապարհով են հասել ԱԺ նախագահին:

ArmLur.am-ի իշխանական աղբյուրները միաժամանակ ընդգծում են, որ ՔՊ ներսում ստեղծված իրավիճակը պետք չէ դիտարկել բացառապես որպես Ալեն Սիմոնյանին պաշտպանելու փորձ: Ըստ նրանց՝ կուսակցության մի շարք ներկայացուցիչների համար խնդիրը հենց Հայկ Սարգսյանի վարքագիծն է: «Նրան ամեն ինչ ներվել էր»,- ՔՊ ներսում, ըստ մեր աղբյուրների, այսպես են մեկնաբանում ստեղծված իրավիճակը՝ նշելով, որ Փաշինյանը Սարգսյանին փաստացի հնարավորություն էր տվել հեռանալ քաղաքական առաջին պլանից, սակայն վերջինս իր հայտարարություններով կրկին հայտնվել է իշխանության ուշադրության կենտրոնում եւ, ինչպես իշխանական շրջանակներում են ձեւակերպում, «Փաշինյանին հանել է հունից»:

Հատկանշական է նաեւ, որ Հայկ Սարգսյանը նախօրեին Սեւանում մասնակցել է ՔՊ ութերորդ քաղաքական ժողովին: Արտաքուստ նա փորձել է ցույց տալ, թե ՔՊ-ի հետ իր հարաբերությունները նորմալ են, եւ որեւէ լուրջ հակասություն չկա:

Սակայն իշխանական մեր աղբյուրների փոխանցմամբ՝ իրական պատկերը բոլորովին այլ է: ՔՊ վերնախավում Սարգսյանի նկատմամբ վերաբերմունքը բավական լարված է, իսկ նրա վերջին հայտարարությունները կուսակցության ներսում նոր դժգոհության ալիք են բարձրացրել:

Փաստորեն, առաջիկայում իրավապահները պետք է պարզեն, թե Նիկոլ Փաշինյանի այն հայտարարության՝ «այս ամենի հետեւանքով ինչ-որ մեկը պետք է բանտ նստի», պատասխանատուն ով է:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԴԱՏԱՎՈՐԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է հանրությանը ներկայացնել, թե ինչ ունեն ՀՀ դատավորները՝ ուսումնասիրելով նրանց գույքի, եկամուտների, դրամական միջոցների եւ այլ ակտիվների վերաբերյալ տարեկան հայտարարագրերը:

Այս անգամ ուսումնասիրել ենք Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Արմենուհի Բադիրյանի 2025 թվականի տարեկան հայտարարագիրը: Դատավորը պաշտոնը ստանձնել է 2023 թվականի հունվարի 7-ին:

Անշարժ գույք

Հայտարարագրի համաձայն՝ 2025 թվականի սկզբին Արմենուհի Բադիրյանն ունեցել է երկու անշարժ գույք: Դրանցից մեկը գտնվում է Տավուշի մարզի Վազաշենում, մյուսը՝ Երեւան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանում: Երկու գույքն էլ հայտարարագրում նշված են որպես համատեղ սեփականություն: Առաջինը ձեռք է բերվել 2005 թվականի մայիսի 17-ին, իսկ երկրորդը՝ 2009 թվականի մարտի 19-ին:

2025 թվականի ընթացքում դատավորը նոր անշարժ գույք չի ձեռք բերել եւ որեւէ անշարժ գույք չի օտարել:

Տարվա վերջին եւս նրա հայտարարագրում առկա են նույն երկու անշարժ գույքերը՝ Տավուշի մարզի Վազաշենում եւ Երեւանում՝ Շենգավիթ վարչական շրջանում:

Արմենուհի Բադիրյանի հայտարարագրում 2025 թվականի սկզբի եւ վերջի դրությամբ որեւէ տրանսպորտային միջոց նշված չէ: Տարվա ընթացքում եւս նա մեքենա չի ձեռք բերել կամ օտարել:

Դրամական միջոցներ

Բանկային հաշիվներում տարվա սկզբին դատավորն ունեցել է 431,624.6 դրամ, իսկ տարվա վերջին՝ 713.7 դրամ:

Կանխիկ դրամական միջոցների մասով փոփոխություն չի արձանագրվել. տարվա սկզբին եւ վերջում Արմենուհի Բադիրյանը հայտարարագրել է 3 մլն դրամ կանխիկ գումար:

Եկամուտ

2025 թվականի ընթացքում Արմենուհի Բադիրյանի եկամուտը կազմել է 14,875,951 դրամ: Այն ամբողջությամբ աշխատանքի վարձատրություն եւ դրան հավասարեցված այլ վճարումներ են, որոնք ստացվել են ՀՀ բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտից:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՎԵՐԱԴԱՐՁՎԵՑ

Սյունիքի մարզի դատախազությունը, պետական (համայնքային) շահերի պաշտպանության լիազորության շրջանակում, ուսումնասիրել է Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Սիսիան քաղաքի «Մայիսի 28» զբոսայգու տարածքում գտնվող հողամասերը տարբեր անձանց տրամադրելու վերաբերյալ փաստաթղթերը: Դատախազության տարածած հաղորդագրության մեջ նշվում է, որ ուսումնասիրության արդյունքում պարզվել է՝ Սիսիան քաղաքի «Մայիսի 28» զբոսայգու տարածքում՝ Սիսականի փողոց 2/1 հասցեում գտնվող՝ 0,03 հա մակերեսով հողատարածքը, օրենքի պահանջների խախտմամբ, կառուցապատման իրավունքով հատկացվել է ֆիզիկական անձի: Դատախազի կողմից միջնորդագիր է հասցեագրվել Սիսիան համայնքի ղեկավարին՝ Սիսիան համայնքի եւ կառուցապատողի միջեւ 2011 թվականի հունիսի 13-ին կնքված կառուցապատման իրավունքը դադարեցնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ: Միջնորդագրի հիման վրա, Սիսիանի համայնքապետարանի իրավասու մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում, Կադաստրի կոմիտեում դադարեցվել է Սիսիան համայնքի «Մայիսի 28» զբոսայգում գտնվող՝ 0,03 հա մակերեսով, 563 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով հողամասի նկատմամբ գրանցված կառուցապատման իրավունքը. հողամասը վերադարձվել է Սիսիան համայնքի տիրապետմանը: Սյունիքի մարզի Սիսիան համայնքի «Մայիսի 28-ի» անվան զբոսայգին զբաղեցնում է 9595.68 քմ տարածք, որտեղ գտնվող հողատարածքները կառուցապատման իրավունքով կնքված պայմանագրերով հատկացվել են 17 անձի: Դատախազական ներգործության արդյունքում՝ նշված այգում գտնվող հողատարածքներից առ այսօր Սիսիան համայնքին վերադարձվել է 8 անձի տրամադրված 5234,48 քմ մակերեսով 10 հողատարածք: Դրանք են՝

1. 0,03 հա մակերեսով հողատարածքը,
2. 0,03 հա մակերեսով հողատարածքը,
3. 0,05308 հա մակերեսով հողամասը,
4. 0,0450 հա մակերեսով հողամասը,
5. 0,05 հա մակերեսով հողամասը,
6. 0,0451 հա մակերեսով հողամասը,
7. 0,08 հա մակերեսով հողամասը,
8. 0,02 հա մակերեսով հողամասը,
9. 0,0402 հա մակերեսով հողամասը,
10. 0,13 հա մակերեսով հողամասը:

9 անձի տրամադրված 10 հողատարածքները համայնքին վերադարձնելու աշխատանքներն ընթացքի մեջ են:

ԱՊՕՐԻՆԻ

Քրեական ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության ծառայողները ստացել էին տեղեկություն, որ սահմանափակ պատասխանատվությամբ մի ընկերության իրավասու անձինք Լճաշեն գյուղի տարածքում իրականացնում են ապօրինի հանքարդյունահանում: Տեղեկությունը ստուգելիս պարզվել է, որ տեւական ժամանակ, առանց հատուկ թույլտվության, համայնքապետարանից վարձակալած հողատարածքում իրականացվել է ձեռնարկատիրական գործունեություն՝ արդյունահանած զանգվածը հատուկ սարքերով տեսակավորել եւ օգտագործել են իրենց ընկերության շինարարական աշխատանքների ընթացքում: Գեղարքունիքի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ, երեք անձ ձերբակալվել է: Ըստ նախնական տվյալների՝ ապօրինի արդյունահանման հետեւանքով պետությանը եւ շրջակա միջավայրին պատճառվել է խոշոր չափերի վնաս: Նախաքննությունը շարունակվում է:

● *Օգոստոսի 31-ից սեպտեմբերի 7-ը Երեւանի պարեկները հայտնաբերել են վարելիս հեռախոսից օգտվելու 280 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բերդ համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանը սեպտեմբերի 1-ին որոշել է՝

1. Բերդ համայնք, Այգեձոր գյուղ, 11-րդ փողոց, 2-րդ փակուղի, 4 շինություն հասցեում գտնվող եւ Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող 0,013 հա մակերեսով բնակավայրերի այլ հողամասերում Յուրի Սարգսի Որսկանյանի կողմից իրականացված 120.87 ք.մ մակերեսով արտաքին չափերով եւ 107.21ք.մ մակերեսով ներքին չափերով ինքնակամ շինությունները՝ անասնաշենքը եւ ծածկերը համարել Բերդ համայնքի սեփականություն եւ ճանաչել օրինական:

2. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած Յուրի Որսկանյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցները եւ համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու շինությունը՝ 120.87 ք.մ մակերեսով արտաքին չափերով եւ 107.21ք.մ մակերեսով ներքին չափերով՝ 129 հազար 573 ՀՀ դրամ անասնաշենքի եւ ծածկերի համար եւ հողամասը՝ 0,013 հա մակերեսով, 18 հազար 447 ՀՀ դրամ կադաստրային արժեքով:

3. Հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ բնակավայրերի այլ հողերից բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի:

Այգեձոր գյուղի բնակիչ, 1960թ. ծնված Յուրի Որսկանյանը «Տավուշ» ՋՕԸ նախկին գործադիր տնօրեն է: 2017թ.-ի ամռանը «Տավուշ» ՋՕԸ-ի կողմից Ոսկեվան բնակավայրում կառուցված 1032 մետր երկարությամբ ոռոգման օժանդակ ջրագծի կապակցությամբ նրան մեղադրանք է առաջադրվել: 2024թ. ապրիլի 15-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Սավել Մարդանյանը վճռել է ճանաչել Յուրի Որսկանյանի անմեղությունը քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (Հենրիկ Միրզոյանի դրվագով) եւ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների կատարման մեջ: Յուրի Որսկանյանին մեղավոր ճանաչել քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (Սամվել Սարգսյանի դրվագով), նրան ազատել քրեական պատասխանատվությունից՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով: Քրեական գործով մեղադրողը վերաքննիչ բողոք է ներկայացրել: 2024թ. հունիսի 25-ին վերաքննիչ դատարանը որոշել է քրեական գործն ըստ առարկայական ընդդատության փոխանցել վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան: Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը 2025թ. փետրվարի 21-ին որոշել է Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի՝ 2024թ. ապրիլի 15-ի դատավճռն ամբողջությամբ բեկանել եւ վարույթը փոխանցել հակակոռուպցիոն դատարան՝ սահմանված ծավալով նոր քննության: Ներկայումս գործը քննվում է հակակոռուպցիոն դատարանում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՇԽԱՐՀ

ԹՐԱՄՓԸ ԶԵԼԵՆՍԿԻԻՆ ԿՈՉ Է ԱՐԵԼ ԴԱԴԱՐԵՑՆԵԼ ԹԻՐԱԽԱՎՈՐՈՒՄԸ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը կոչ է արել Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկիին դադարեցնել Ռուսաստանում դիզվառելիքի արտադրության եւ ենթակառուցվածքների թիրախավորումը՝ հայտարարելով, որ այդ հարվածները նպաստում են վառելիքի պակասին եւ «վնասում են աշխարհին»:

Reuters-ի փոխանցմամբ՝ Թրամփը նման հայտարարություն է արել սեպտեմբերի 13-ին Իռլանդիայում՝ Irish Open գոլֆի մրցաշարի ընթացքում լրագրողների հետ զրույցում:

«Պարոն Զելենսկին պետք է մեկ բան անի՝ դադարեցնի Ռուսաստանում դիզվառելիքի ոչնչացումը: Կան բազմաթիվ այլ թիրախներ: Մի հարվածեք դիզվառելիքին: Դա վնասում է աշխարհին»,- ասել է ԱՄՆ նախագահը:

Թրամփի խոսքով՝ այդ հարցը քննարկվել է նաեւ Զելենսկիի հետ: Նա պնդել է, որ աշխարհում վառելիքի պակասը պայմանավորված չէ միայն Մերձավոր Արեւելքում տեղի ունեցող իրադարձություններով, այլ նաեւ Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ պատերազմով:

Վերջին ամիսներին Ուկրաինան հեռահար անօդաչու թռչող սարքերով մի շարք հարվածներ է հասցրել Ռուսաստանի նավթավերամշակման գործարաններին: Reuters-ի տվյալներով՝ այդ հարձակումների հետեւանքով նվազել է Ռուսաստանում վառելիքի արտադրությունը, ինչն էլ երկրի տարբեր հատվածներում բենզինի պակաս է առաջացրել:

Ուկրաինան, որը պարբերաբար բախվում է Ռուսաստանի կողմից սեփական էներգետիկ ենթակառուցվածքների հարվածներին, պնդում է, որ նավթավերամշակման գործարանները օրինական ռազմական թիրախներ են:

Միաժամանակ ԱՄՆ-ում դիզելային վառելիքի ազգային միջին գինը սեպտեմբերի 10-ին առաջին անգամ գերազանցել է մեկ գալոնի դիմաց 6 դոլարը՝ ըստ GasBuddy-ի տվյալների: Դիզելն օգտագործվում է բեռնատարների, գնացքների, նավերի եւ գյուղատնտեսական տեխնիկայի համար:

Reuters-ը նաեւ նշում է, որ Ռուսաստանը 2026թ. նավթի արդյունահանման կանխատեսումը նվազեցրել է՝ հասցնելով վերջին 17 տարվա ամենացածր մակարդակին: Կառավարության նախնական կանխատեսման համաձայն՝ պատերազմը ազդեցություն է ունեցել նաեւ 2026 եւ 2027թթ. համար Ռուսաստանի վառելիքի արտահանման հեռանկարների վրա:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԶԳՈՆՈՒԹՅԱՆ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ

ArmLur.am-ը շարունակում է հետեւել սոցիալական ցանցերում օգտատերերի կողմից տարածվող ուշագրավ հրապարակումներին եւ քննարկումներին: Այս անգամ ուշադրության կենտրոնում են հայտնվել TikTok-ում եւ Instagram-ում տարածվող տեսանյութերը, որոնցում Հայաստանում բնակվող կամ հաստատված աֆրիկացիներ իրենց հայրենակիցներին կոչ են անում տեղափոխվել եւ մշտական բնակություն հաստատել Հայաստանում:

Մասնավորապես, գործարար Սամսոն Գրիգորյանն իր ֆեյսբուքյան էջում անդրադարձել է այս երեւույթին՝ պետական մարմիններին կոչ անելով ուշադրություն դարձնել սոցիալական ցանցերում տարածվող նման հրապարակումներին:

«Ուշադրություն. Սոցիալական ցանցերում (TikTok, Instagram) տասնյակ բնիկ աֆրիկացիներ հրավիրում են աֆրիկացիներին տեղափոխվել մշտական բնակության Հայաստան (բառացի relocate to Armenia): Առաջարկում են օգնություն, թղթերի ձեւակերպում եւ այլն: Ցուցադրում են արդեն ժամանածների դիմավորումը եւ այլն»,- գրել է նա:

Գրիգորյանը, միաժամանակ, նշել է, որ, իր գնահատմամբ, այս պահին երեւույթը դեռ անհանգստացնող մասշտաբների չի հասել, սակայն պետական մարմիններին եւ լրագրողներին կոչ է արել ուսումնասիրել հարցը:

«Սա դեռ անհանգստացնող մասշտաբների չի հասնում, սակայն բոլորս գիտենք, որ տվյալ մայրցամաքից միգրանտների հետ որքան անսպասելի են խնդիրները դառնում վտանգավոր»,- գրել է գործարարը: Նա նաեւ առաջարկել է նախապես ուսումնասիրել հնարավոր զարգացումները եւ համապատասխան կանոններ ու օրենսդրական կարգավորումներ մշակել:

«Ուսումնասիրեք, զբաղվեք, նախապես կանոններ եւ օրենքներ մշակեք, հետո ուշ չլինի»,- նշել է Սամսոն Գրիգորյանը:

Ս. Գ.

ՄՆՈՒՄ Է ՀՍՏԱԿ ԵՎ ԱՆՓՈՓՈԽ

Իրանի միջուկային քաղաքականությունը մնում է հստակ, եւ միջուկային զսպման վերաբերյալ քննարկումներն արտասովոր քայլեր չեն՝ հաշվի առնելով երկրի միջուկային օբյեկտների դեմ ուղղված բազմակի հարձակումներն ու դիվերսիոն գործողությունները: Ինչպես «Արմենպրես»-ը տեղեկանում է IRNA գործակալությունից, այս մասին սեպտեմբերի 14-ին մամուլի ասուլիսում հայտարարել է Իրանի արտաքին գործերի նախարարության խոսնակ Էսմայիլ Բաղային:

Նա հերքել է պնդումները, որ Թեհրանը փոխել է իր միջուկային դոկտրինը կամ քննարկում է «Միջուկային զենքի չտարածման մասին» պայմանագրից դուրս գալու հնարավորությունը:

Բաղային հավելել է, որ Իրանի միջուկային օբյեկտները տասնյակ դիվերսիաների են ենթարկվել, չնայած գտնվում են Ատոմային էներգիայի միջազգային գործակալության վերահսկողության տակ, մինչդեռ Թեհրանը շարունակում է հավատարիմ մնալ «Միջուկային զենքի չտարածման մասին» պայմանագրով ստանձնած պարտավորություններին:

Հորմուզի նեղուցի անվտանգության վերաբերյալ խոսնակը նշել է, որ հարցը վերաբերում է նեղուցի ափամերձ երկու պետություններին՝ Իրանին եւ Օմանին՝ հավելելով, որ ջրային ուղու ներկայիս անկայուն վիճակն ԱՄՆ-ի գործողությունների հետեւանք է:

Բաղային նաեւ անդրադարձել է Թուրքիայի հետ հարաբերություններին՝ նշելով, որ Իրանի եւ Թուրքիայի հարաբերությունները շատ ավելի հեռու են գնում, քան պարզապես Թեհրանի եւ Վաշինգտոնի միջեւ հաղորդագրություններ փոխանցելը: Նա երկու հարեւան երկրները բնութագրել է որպես գործընկերներ՝ լայն ընդհանուր շահերով եւ կանոնավոր դիվանագիտական կապերով:

Բաղային նաեւ ողջունել է Չինաստանի սկզբունքային եւ պատասխանատու դիրքորոշումը տարածաշրջանային անվտանգության հարցում՝ շեշտելով, որ Պեկինը կառուցողական դեր է խաղացել կայունության ամրապնդման գործում:

Դիվանագետի խոսքով՝ Հնդկաստանում անցկացված BRICS-ի գագաթնաժողովի շրջանակում Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանի հանդիպումն Աբու Դաբիի թագաժառանգ Խալեդ բին Մուհամմադ բին Զայեդ ալ-Նահյանի հետ կազմակերպվել է ԱՄԷ-ի խնդրանքով: Նա հավելել է, որ Իրանն ընդունել է հանդիպման առաջարկը՝ որպես վստահության եւ տարածաշրջանային հարաբերությունների ամրապնդմանն ուղղված իր քաղաքականության մաս: Բաղային նշել է, որ առաջնահերթություն է տրվել երկկողմ հարցերին, ինչպես նաեւ տարածաշրջանային խաղաղությանն ու անվտանգությանը:

● *Մարզերում օգոստոսի 31-ից սեպտեմբերի 7-ը պարեկները հայտնաբերել են վարելիս հեռախոսից օգտվելու 875 դեպք:*

ԼՈՒՐԵՐ

ԿԴԱԴԱՐԵՑՎԻ

ՌԴ տարածքում պլանային պրոֆիլակտիկ եւ վերանորոգման աշխատանքներով պայմանավորված՝ ժամանակավորապես կդադարեցվի Հայաստան բնական գազի մատակարարումը: Այս մասին հայտնում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն: «ՌԴ տարածքում «Հյուսիսային Կովկաս-Անդրկովկաս» մայրուղային գազատարի վրա պլանային պրոֆիլակտիկ եւ վերանորոգման համալիր աշխատանքներով պայմանավորված՝սեպտեմբերի 15-ից 25-ն ընկած ժամանակահատվածում ժամանակավորապես դադարեցվելու է նշված գազատարով Հայաստան բնական գազի մատակարարումը: Նշված ժամանակահատվածում հանրապետության սպառողների անխափան եւ հուսալի գազամատակարարումը կիրականացվի առանց սահմանափակումների՝ ներքին պաշարների եւ ԻԻՀ-ից մատակարարվող բնական գազի լրացուցիչ ծավալների հաշվին»,- ասվում է հաղորդագրության մեջ:

ԱՐԳԵԼՎԱԾ ԻՐԵՐ

Քրեակատարողական ծառայությունը հետեւողականորեն շարունակում է իրականացնել համալիր միջոցառումներ՝ ուղղված քրեակատարողական հիմնարկներ թմրամիջոցների եւ արգելված իրերի ներթափանցման, ինչպես նաեւ ազատազրկված անձանց կողմից դրանց պահման եւ ապօրինի շրջանառության կանխարգելմանն ու բացահայտմանը: Այս մասին հայտնում են ՔԿ-ից:

2026 թվականի օգոստոսին Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության եւ տարածքային բաժինների, հատուկ նշանակության բաժնի, ինչպես նաեւ քրեակատարողական հիմնարկների անվտանգության ապահովման ստորաբաժանումների ծառայողների կողմից իրականացված միջոցառումների արդյունքում հայտնաբերվել է՝

53,61գր թմրամիջոցների նմանվող զանգվածներ,
32,8մլ թմրամիջոցի նմանվող հեղուկ,
127 բջջային հեռախոս,
196 բջջային հեռախոսի պարագա,
8 wi-fi սարք,
24 կտրող-ծակող առարկա,
115լ ինքնաշեն ոգելից խմիչք եւ արգելված այլ իրեր:

Բոլոր դեպքերով նախաձեռնվել են քրեական, վարչական եւ կարգապահական վարույթներ, նշանակվել են դատաքիմիական փորձաքննություններ: Քրեակատարողական ծառայությունը կրկին հորդորում է քաղաքացիներին խստորեն պահպանել քրեակատարողական հիմնարկներ այցելելու՝ օրենքով սահմանված պահանջները եւ զերծ մնալ անօրինական գործողություններից:

ՄԱՄՈՒԼ

ԳԵՐՄՈՏԻՎԱՑՎԱԾ ԵՎ ՖԻԶԻԿԱՊԵՍ ՀԶՈՐԱՑԱԾ ՖՈՒՏԲՈԼԻՍՏ

Լեհական մամուլը շարունակում է ակտիվորեն քննարկել Հայաստանի Պրեմիեր լիգայի 2025/26 մրցաշրջանի լավագույն ֆուտբոլիստ Արթուր Սերոբյանի տրանսֆերը «Լեխիա Գդանսկ»:

Գործարքը հատկապես ուշագրավ է նրանով, որ 23-ամյա վինգերը լեհական ակումբին կմիանա միայն ձմռանը՝ «Արարատ-Արմենիայի» կազմում Եվրոպա լիգայի հիմնական փուլի հանդիպումներն ավարտելուց հետո:

Հայտնի iGol.pl պարբերականը ծավալուն վերլուծական հոդված է նվիրել հայ ֆուտբոլիստի կարիերայի վայրիվերումներին, խաղային որակներին եւ նրանից ակնկալվող սպասելիքներին, գրում է arm-sport-ը:

Ստորեւ ներկայացնում ենք լեհ լրագրողների ուշագրավ դիտարկումներն ու հոդվածի հիմնական շեշտադրումները:

Անակնկալ տրանսֆեր՝ սպասումներով

«Լեխիա Գդանսկի» երկրպագուները հիասթափված էին Կամիլո Մենայի հեռանալուց, սակայն ակումբը տրանսֆերային պատուհանի վերջնամասում անակնկալ մատուցեց՝թիրախավորելով Հայաստանը: Թիմին միացան Հայաստանի հավաքականի երկու ֆուտբոլիստներ, որոնցից ամենահնչեղ անունը 23-ամյա Արթուր Սերոբյանն է: Ուշագրավ է, որ վինգերը լեհական թիմին կմիանա միայն ձմռանը: «Լեխիան» գնել է նրա տրանսֆերը «Արարատ-Արմենիայից», սակայն վարձավճարով թողել է հայրենիքում, որպեսզի Սերոբյանն օգնի իր թիմին Եվրոպա լիգայի լիգայի փուլում: Սերոբյանը Լեհաստան է տեղափոխվում որպես Հայաստանի Պրեմիեր լիգայի գործող չեմպիոն եւ անցած մրցաշրջանի լավագույն ֆուտբոլիստ:

Իսկական առաջատարի պրոֆիլ

2003 թվականին Երեւանում ծնված Սերոբյանը շատ վաղ է մուտք գործել մեծ ֆուտբոլ՝ իր նորամուտը նշելով 17 տարեկանում: Լինելով ընդգծված ձախլիկ՝ նա հիմնականում գործում է աջ եզրում, թեեւ կարող է խաղալ նաեւ հակառակ թեւում: Աչքի է ընկնում հիանալի դինամիկայով, սիրում է դիմել դրիբլինգի, իսկ «մեկը մեկի դեմ» պայքարը նրա գլխավոր զենքերից է: Սերոբյանի խաղառճը իդեալականորեն տեղավորվում է հարձակվողական փիլիսոփայության մեջ՝ կտրուկ տեղաշարժ դեպի կենտրոն, հզոր հարված եւ սուր փոխանցումներ, ինչը նրան դարձնում է դժվար կանխատեսելի մրցակցի համար:

Կարիերայի վայրիվերումներն ու արտասահմանյան փորձը

Սերոբյանի աճը միանգամից հարթ չի ընթացել: ԲԿՄԱ-ում անցկացրած վարձավճարն առանցքային եղավ, որտեղ Ռաֆայել Նազարյանի գլխավորությամբ նա ստացավ անհրաժեշտ խաղաժամանակ ու վստահություն (43 խաղ, 4 գոլ): 2023-ի աշնանը ֆուտբոլիստը վարձավճարով տեղափոխվեց պորտուգալական «Կազա Պիա»: Թեեւ սա հիանալի հնարավորություն էր թոփ լիգայում հանդես գալու համար, խիստ մրցակցության պայմաններում նա անցկացրեց ընդամենը 4 հանդիպում: 2025-ի հունվարին Սերոբյանը նոր փորձառություն ստացավ՝ միանալով Տիրասպոլի «Շերիֆին»: Մերժելով հունական եւ ռուսական առաջարկները՝ նա ընտրեց Մոլդովան եւ բավականին հաջող հանդես եկավ՝ 25 խաղում դառնալով 4 գոլի եւ 6 ասիստի հեղինակ, ինչպես նաեւ նվաճելով երկրի գավաթը:

Ոսկե ժամանակաշրջանը «Արարատ-Արմենիայում»

«Շերիֆից» հետո Սերոբյանը վերադարձավ «Արարատ-Արմենիա», եւ դա սպորտային տեսանկյունից իդեալական որոշում էր: 2025/26 մրցաշրջանում նա դարձավ թիմի հիմնական շարժիչ ուժը՝22 խաղում խփելով 7 գոլ եւ դառնալով երկրի չեմպիոն: ՀՖՖ-ի քվեարկությամբ Սերոբյանը ճանաչվեց մրցաշրջանի լավագույն ֆուտբոլիստ՝ վստահորեն առաջ անցնելով «Նոայի» վինգեր Էլդեր Ֆերեյրայից:

Հավաքականի կայուն անդամը

Անցնելով տարիքային բոլոր հավաքականներով՝ Սերոբյանն արդեն 26 հանդիպում է անցկացրել ազգային թիմում: 2026 թվականի հունիսին Մոլդովայի դեմ խաղում նա խփեց իր անդրանիկ գոլը հավաքականի մարզաշապիկով: Ակնառու է նրա պրոֆեսիոնալիզմը. նույնիսկ այն դեպքերում, երբ նա դուրս է մնում հայտացուցակից (ինչպես Վրաստանի դեմ խաղում), Սերոբյանն ընդգծում է, որ հարգում է մարզչի որոշումը, իսկ իր համար գլխավորը թիմի կողքին լինելն է:

Ապացուցելու ժամանակը

Այժմ Արթուր Սերոբյանը պատրաստվում է լեգեոներական իր երրորդ՝ամենահասուն փորձին: Նախքան Լեհաստան մեկնելը նա կմասնակցի Եվրոպա լիգայի աշնանային արշավին, որտեղ կմրցի Պրահայի «Սպարտայի», Բիալիստոկի «Յագելոնիայի», ԱԶ Ալկմարի, «Զալցբուրգի», ՆԵԿ-ի, «Ցելյեի» եւ իտալական հսկա «Միլանի» դեմ: Եթե նա կարողանա իրեն լավ դրսեւորել եվրագավաթային այս բարդ դիմակայություններում, գարնանը լեհական ակումբը Betclic 1 Լիգայի համար կստանա գերմոտիվացված եւ ֆիզիկապես հզորացած ֆուտբոլիստի:

ՅՈՒՆԻԲԱՆԿԸ՝ ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐ

Յունիբանկը դարձել է Camp Nairi-ին աջակցող AGBU Global Run-ի գլխավոր հովանավորը՝ որպես կորպորատիվ դոնոր միանալով միջազգային բարեգործական նախաձեռնությանը, որի նպատակն է աջակցել պատերազմի եւ տեղահանության հետեւանքով տուժած երեխաներին ու ընտանիքներին:

Հավաքագրված միջոցները կուղղվեն ճամբարի մասնակիցների հանգստի եւ զարգացման ծրագրերին, մասնագիտական հոգեբանական աջակցության տրամադրմանը, ինչպես նաեւ ծրագրի ընդլայնմանը:

Որպես գլխավոր հովանավոր՝ Յունիբանկն աջակցում է նախաձեռնությանը ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհի տարբեր երկրներում: Global Run-ի թիմեր են ձեւավորվել բազմաթիվ քաղաքներում, այդ թվում՝ Բարսելոնայում, Բրյուսելում, Լոս Անջելեսում, Լոնդոնում, Նյու Յորքում, Նիսում, Փարիզում, Շանհայում, Սիդնեյում, Տոկիոյում, Տորոնտոյում, Ցյուրիխում: Camp Nairi-ին աջակցող AGBU Global Run-ը կմեկնարկի սեպտեմբերի 13-ին Երեւանում՝ Հրազդանի կիրճում անցկացվող 5 կմ վազքով, որից հետո նախաձեռնությանը կմիանան աշխարհի եւս 21 քաղաքներ:

Աջակցելով Camp Nairi-ին՝ Յունիբանկը նպաստում է երեխաների բարեկեցությանն ու զարգացմանը, օգնում բացահայտել նոր հնարավորություններ եւ ավելի մեծ վստահությամբ ու հույսով նայել ապագային: Արդեն 25 տարի Յունիբանկը, որպես ֆինանսական կառույց, իր գործունեությունը համատեղում է հասարակության հանդեպ պատասխանատու մոտեցման հետ: Սոցիալական նշանակություն ունեցող նախաձեռնությունների աջակցությունը՝ հատկապես կրթության, երիտասարդության զարգացման եւ սպորտի ոլորտներում, մշտապես եղել է Բանկի գործունեության կարեւոր ուղղություններից մեկը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ԹԱՏՐՈՆ

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է 105-ՐԴ ԹԱՏԵՐԱՇՐՋԱՆԸ

Շեքսպիրյան անմահ երկի՝ «Ռոմեո եւ Ջուլիետ»-ի ինքնատիպ մեկնությամբ ու նոր բեմադրությամբ կմեկնարկի Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի 105-րդ թատերաշրջանի բացումը: Ներկայացման բեմադրիչն է Ջոն Բլոնդելլը (ԱՄՆ), որը «Լիթ Մուն» թատերական ընկերության համահիմնադիրն է, գեղարվեստական ղեկավարը եւ թատրոնի ռեժիսորը: Այս մասին հայտնում են ԿԳՄՍ նախարարությունից:

Ճանաչված ռեժիսորի հետ համագործակցությունը հնարավոր է դարձել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի եւ «Կերոն» զարգացման հիմնադրամի համագործակցությամբ:

Սպասվում է բեղուն թատերաշրջան

Պրեմիերայի եւ թատերաշրջանի բացման կապակցությամբ Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի է ունեցել մամուլի ասուլիս՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Տիգրան Վիրաբյանի, Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի տնօրեն Վարդան Մկրտչյանի, «Կերոն» զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Վանանե Արարքցյանի, ռեժիսոր Ջոն Բլոնդելլի, թատրոնի ստեղծագործական, դերասանական կազմի մասնակցությամբ:

Տիգրան Վիրաբյանը շնորհավորել է ներկաներին նոր թատերաշրջանի մեկնարկի կապակցությամբ՝ հույս հայտնելով, որ այն լինելու է բեղուն. «Թատրոնի աշխատակազմի հետ մի շարք նախագծեր ենք քննարկել, որոնք ենթադրում են նաեւ համագործակցություններ պետական այլ կոլեկտիվների հետ: Օրինակ՝ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնը բեմականացում է ներկայացնելու, որտեղ կինչի կենդանի երաժշտություն»:

Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնը՝ ֆրանկոֆոնիայի հարթակ

Նախարարի տեղակալը 2027-ը Սունդուկյան թատրոնի համար կարեւորել է նաեւ Ֆրանկոֆոնիայի մարզամշակութային խաղերի համատեքստում: Ֆրանկոֆոնիայի խաղերի մի հատվածը, որը ներառում է ստեղծագործական բաղադրիչը, նույնպես տեղի է ունենալու թատրոնի բեմահարթակներում:

«Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնը երբեք չի ունեցել ստեղծագործական խիզախումների պակաս: Եվ անելիքների այն չափաբաժինն ու ծավալը, որոնք առաջարկվում են 105-րդ թատրերաշրջանի համար, թեեւ ռիսկային են, բայց առկա ներուժը բավարար է անելիքի իրականացման համար: Մենք վստահ ենք, որ այն բոլոր նախագծերը կյանքի կկոչվեն՝ բերելով հանդիսատեսի մեծ հոսք»,- ասել է Տիգրան Վիրաբյանը՝ կարեւորելով թատրոններում ստեղծագործական պատասխանատուների ինստիտուտի ամրապնդումը:

Թատերաշրջանում նախատեսվող փոփոխությունները

Բացման խոսքում թատրոնի տնօրեն Վարդան Մկրտչյանը տեղեկացրել է՝ «-Ռոմեո եւ Ջուլիետ» ներկայացման պրեմիերան տեղի կունենա սեպտեմբերի 12-ին, 13-ին, 18-ին: Ներկայացումը ներառում է ժամանակակից բեմական խաղառճեր եւ ստեղծում է աշխարհի մեծագույն ողբերգություններից մեկի անսպասելի եւ անմիջական տարբերակ: 105-րդ թատերաշրջանի ընթացքում նախատեսվում է հիմնանորոգել երկու կարեւոր բակային հատվածները՝ Պանո հարթակի բաց սրահը եւ Black Box-ին սպասարկող բաց սրահը: Գլխավոր նորություններից է նաեւ Բաց բեմը, որտեղ էլ կկայանա «Ռոմեո եւ Ջուլիետ» ներկայացման պրեմիերան: Սպասվում են նաեւ կրթական տարաբնույթ նախագծեր երեխաների համար:

Նոր շունչ, նոր հայացք

«Կերոն» զարգացման հիմնադրամը՝ որպես Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի ռազմավարական գործընկեր, աջակցել է, որ հինգ տարի ժամկետով Հայաստան հրավիրվի ռեժիսոր Ջոն Բլոնդելլը:

«Մեզ համար շատ կարեւոր ուղղություն է մշակութային ծրագրերի աջակցումը: Առնվազն հինգ տարի ժամկետով Հայաստան ենք հրավիրում արտերկրի առաջատար մասնագետների, որոնք աշխատանքին զուգահեռ նաեւ կրթական նախագծեր են ղեկավարում՝ այդպիսով իրենց գիտելիքը կիսելով մեր երկրի տարբեր բնագավառների մասնագետների հետ: Շնորհակալ եմ այս համագործակցության համար, եւ վստահ ենք, որ նոր ձեռագիրը, նոր շունչը, միջազգային մասնագետների ներգրավումը իսկապես մեր երկրում կփոխեն միջավայր»,- ասել է Վանանե Արարքցյանը:

Ջոն Բլոնդելլը ներկայացրել է հրավերի նախապատմությունը, Հայաստանում Սունդուկյանի թատրոնի ստեղծագործական կազմի հետ աշխատանքի ընթացքը, ներկայացման նորություններն ու առանձնահատկությունները, առաջիկա պլանները: «Ես այստեղ եմ նորամուծություններ բերելու համար: Ինձ շատ հաճելի է աշխատել դերասանական այս կազմի հետ եւ նրանց հետ կյանքի կոչել նոր գաղափարներ»,- ասել է նա:

«Ռոմեո եւ Ջուլիետ» ներկայացման դերակատարներն են Արմեն Քուշկյանը, Լուսինե Կոստանյանը, Սիրանուշ Եսայանը, Տաթեւիկ Միրզոյանը, Սաթենիկ Գասպարյանը, Ջուլիա Մովսեսյանը, Ռոման Բաբայանը, Ալեքսան Թադեւոսյանը, Հայկ Իսրաելյանը, Արթուր Հարությունյանը, բեմանկարչությունը եւ բեմազգեստը՝ Բլագոյ Միցեւսկիի (Մակեդոնիա), կոմպոզիտոր՝ Սայմոն Բլոնդելլ (ԱՄՆ):

Ասուլիսի ընթացքում հայտարարվել են թատերաշրջանի պրեմիերաները:

ՄԱՐԶԱԿԱՆ

Ո՞Վ Է ԱՐԺԱՆԻ

«Բարսելոնայի» եւ Իսպանիայի հավաքականի 19-ամյա աստղ Լամին Յամալը վստահ է, որ այս պահին աշխարհում իրեն հավասարը չունի՝ բացառությամբ Կիլիան Մբապեի: Անդրադառնալով 2026 թվականի «Ոսկե գնդակի» մրցավազքին՝ իսպանացի տաղանդը նշել է, որ հենց ինքն է արժանի ֆուտբոլային ամենահեղինակավոր անհատական մրցանակին: «Անկեղծ ասած, կարծում եմ, որ աշխարհի լավագույն խաղացողի կոչմանը հավակնում ենք երկուսս՝ ես եւ Կիլիան Մբապեն: Ամեն ինչ շատ պարզ է ու ինձ համար՝ միանգամայն ակնհայտ: Դա գիտեն բոլորը, ովքեր ֆուտբոլ են դիտում: Կարծում եմ՝ այս տարի ես արժանի եմ այդ մրցանակին՝ վերջին մրցաշրջաններում նվաճածս տիտղոսների շնորհիվ»,- ըստ armsport-ի՝ Յամալի խոսքերն է մեջբերում Movistar-ը: France Football հանդեսն արդեն հրապարակել է 2026 թվականի «Ոսկե գնդակի» 30 հավակնորդների ցանկը, որում, սպասելիորեն, ընդգրկված է նաեւ Յամալը: Անցած մրցաշրջանը երիտասարդ վինգերի համար իսկապես ֆանտաստիկ էր: Նա փայլուն անհատական վիճակագրություն է գրանցել եւ հասել պատմական թիմային նվաճումների. «Բարսելոնայի» կազմում՝ 45 հանդիպում բոլոր մրցաշարերում, 24 գոլ եւ 18 գոլային փոխանցում: Կատալոնացիների հետ նա դարձել է Իսպանիայի չեմպիոն (ընդհանուր առմամբ արդեն եռակի): Իսպանիայի հավաքականում՝ Եվրո-2024-ի եւ ԱԱ-2026-ի հաղթող: Աշխարհի առաջնության 8 խաղում նա իր ակտիվն է գրանցել 1 գոլ եւ 1 արդյունավետ փոխանցում: «Ոսկե գնդակի» հանձնման հանդիսավոր արարողությունը կկայանա հոկտեմբերի 26-ին՝ Լոնդոնում:

ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Իտալական Ա Սերիայի 4-րդ տուրի շրջանակում «Սասուոլոն» սեփական հարկի տակ հյուրընկալեց «Յուվենտուսին»: Հանդիպման առաջին խաղակեսում գոլեր չգրանցվեցին: 65-րդ րոպեին տանտերերին հաշվի մեջ առաջ մղեց Էսպոզիտոն: 81-րդ րոպեին Ժեգրովան հավասարեցրեց հաշիվը: Բայց 89-րդ րոպեին տանտերերը նորից առաջ անցան հաշվի մեջ. աչքի ընկավ Բոուին, իսկ մեկ րոպե անց կրկին հավասարությունը վերականգնեց Ժեգրովան: Բայց դա էլ վերջը չէր. հանդիպման վերջակետը դրեց Վասիլի Աջիչը, ով, ի դեպ, թուրինյան ակումբի սանն է: Մրցավարի՝ հանդիպման ավարտն ազդարարող սուլիչից հետո, լուսատախտակին հաշիվը 3-2 էր: «Յուվենտուսը» ակումբային ռեկորդ սահմանեց կազմում՝ իտալացի ֆուտբոլիստների քանակի առումով: Գլխավոր մարզիչ Լուչիանո Սպալետտին «Սասուոլոյի» դեմ մեկնարկային կազմում չընդգրկեց ոչ մի իտալացի ֆուտբոլիստի՝ բացառությամբ դարպասապահի: Միակ տեղացի ֆուտբոլիստը դարպասապահ Գուլյելմո Վիկարիոն էր: Նախկինում թուրինյան ակումբը երբեք լիգայի հանդիպում չէր սկսել առանց որեւէ իտալացու խաղադաշտում (տվյալ դեպքում նկատի է առնվում բացի դարպասապահից մյուս դիրքերը): Այս խաղից հետո «Սասուոլոն» վաստակած 7 միավորով զբաղեցնում է Ա Սերիայի մրցաշարային աղյուսակի 9-րդ տեղը, իսկ «Յուվենտուսը» նույնքան միավորով զբաղեցնում է 8-րդ հորիզոնականը, գրում է armsport-ը:

ԿՎԵՐԱՆՎԱՆՎԻ

ԱՄՆ Թենեսի նահանգում Նեշվիլի միջազգային օդանավակայանը կարող է անվանակոչվել ամերիկյան ֆանքի երաժշտության լեգենդ Դոլլի Փարթոնի անունով:

Նեշվիլի մետրոպոլիտեն օդանավակայանային վարչության հանձնաժողովը միաձայն՝6 կողմ ձայնով, քվեարկել է օդանավակայանի անվանումը փոխելու գործընթացը սկսելու օգտին: Վերջնական անվանումը դեռ հաստատված չէ, սակայն քննարկվում է «Դոլլի Փարթոնի միջազգային օդանավակայան» տարբերակը:

Օդանավակայանի վարչությունից հայտնել են, որ համագործակցում են համապատասխան կողմերի հետ՝ որոշելու, թե ինչպես պետք է Փարթոնի անունն ու ժառանգությունը ներառվեն օդանավակայանի անվանման մեջ: Նշվում է, որ գործընթացը կարող է տեւել մեկ տարի կամ ավելի, իսկ վերջնական որոշումը կկայացվի օդանավակայանի ղեկավարության եւ երգչուհու հիմնադրած Dollywood Foundation-ի համատեղ համաձայնությամբ:

Այս քայլը կարող է պատմական դառնալ, քանի որ Դոլլի Փարթոնը կդառնա ԱՄՆ-ի 50 ամենածանրաբեռնված օդանավակայաններից մեկի անվան մեջ հիշատակվող առաջին կինը:

Օդանավակայանը Փարթոնի անունով անվանակոչելու նախաձեռնությունը շրջանառվում էր դեռեւս նրա մահից առաջ: 2025 թվականի սկզբին այդ նպատակով ստորագրահավաք էր մեկնարկել: Երգչուհու մահից հետո՝ օգոստոսի 25-ին, նախաձեռնությունը ստացել է նաեւ քաղաքական տարբեր ճամբարների ներկայացուցիչների աջակցությունը:

Թենեսիի հանրապետական նահանգապետ Բիլ Լին, ինչպես նաեւ Նեշվիլի դեմոկրատ քաղաքապետ Ֆրեդի Օ'Քոնելը աջակցել են նախաձեռնությանը: Լին հայտարարել էր, որ այն վայրում, որտեղ Թենեսին ողջունում է աշխարհին, նպատակահարմար է, որ Նեշվիլի օդանավակայանը կրի նահանգի սիրելի դստեր անունը:

Դոլլի Փարթոնը մահացել է օգոստոսի 25-ին՝80 տարեկան հասակում: Euronews-ի փոխանցմամբ՝նա մահացել է քաղցկեղի դեմ կարճատեւ պայքարից հետո: Նրա մահից հետո աշխարհում բազմաթիվ երկրպագուներ, հայտնի մարդիկ եւ հասարակական գործիչներ իրենց հարգանքի տուրքն են մատուցել երգչուհուն:

Միաժամանակ Փարթոնի ընտանիքը կոչ է արել զերծ մնալ նրա մահվան շուրջ ապատեղեկատվության եւ արհեստական բանականությամբ ստեղծված կեղծ բովանդակության տարածումից: Երգչուհու քույրը՝ Սթելլա Փարթոնը, նշել է, որ ընտանիքը մեծ ճնշման եւ անզգայության է ենթարկվում անծանոթ մարդկանց կողմից եւ կոչ է արել Դոլլի Փարթոնի կյանքը օրինակ ծառայեցնել հանդուրժողականության ու հարգանքի համար:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

● *Ա. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում սեպտեմբերի 20-ին՝ ժամը 14:30-ին, կկայանա «Փերփերի շոու» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Որո՞նք են արհեստագործական (ուսումնարան) եւ միջին մասնագիտական (քոլեջ) կրթական ծրագրերի հիմնական տարբերությունները:

Սուրեն Թաթոսյան, 54 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Մասնագիտական կրթության համակարգում սահմանվում է ուսումնական հաստատության «քոլեջ» տեսակը: Մասնագիտական կրթությունն իրականացվում է հետեւյալ կրթական ծրագրերի մակարդակներով.

1) արհեստագործական հիմնական կրթական ծրագիր՝ արհեստավորի կամ կրտսեր մասնագետի որակավորում.

2) միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագիր՝ մասնագետի որակավորում:

Մասնագիտական կրթությունն իրականացվում է առանձնացված երկու կրթական մակարդակներում աստիճանաշնորհող հետեւյալ հիմնական կրթական ծրագրերով.

1) առաջին մակարդակում՝ արհեստագործական կրթություն, որի ուսումնառությունն ավարտվում է պետական ամփոփիչ ստուգմամբ, եւ ուսումնառությունն ավարտած անձին շնորհվում է արհեստավորի կամ կրտսեր մասնագետի որակավորման աստիճան.

2) երկրորդ մակարդակում՝ մասնագետի կրթություն, որի ուսումնառությունն ավարտվում է պետական ամփոփիչ ստուգմամբ, եւ ուսումնառությունն ավարտած անձին շնորհվում է մասնագետի որակավորման աստիճան:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարելի է ստանալ խորհրդատվություն Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից:

Գոհար Մինասյան, 47 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Ուսումնական հաստատությունները, հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնները կամ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները կարող են Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնին ներկայացնել խորհրդատվության հայտ՝ նշելով անհրաժեշտ խորհրդատվության թեման: Հայտը ստանալուց հետո Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի մասնագետները կապ կհաստատեն հայտը ներկայացնողի հետ՝ համաձայնեցնելու խորհրդատվության օրն ու ժամը:

Անհատները եւ երեխայի կրթության եւ զարգացման հարցերով զբաղվող կազմակերպությունները կարող են կապ հաստատել Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի հետ՝ ներկայացնելով իրենց հետաքրքրող հարցերը կամ անհրաժեշտ խորհրդատվության թեման:

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Էջմիածին-Աշտարակ ճանապարհի հիմանորոգման վերջը չի երեւում. փոշին ու ցեխը պատուհաս են դարձել երեխաների ու վարորդների համար:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 6 + 11 + 24 + 29
Կոտայքի լեռներ	+ 7 + 11 + 24 + 27
Կոտայքի նախալեռներ	+ 14 + 16 + 30 + 32
Գեղարքունիք	+ 7 + 12 + 21 + 26
Լոռի	+ 8 + 13 + 24 + 28
Տավուշ	+ 9 + 13 + 25 + 28
Արագածոտնի լեռներ	+ 6 + 10 + 23 + 26
Արագածոտնի նախալեռներ	+ 14 + 17 + 29 + 33

Արարատ	+ 14 + 17 + 31 + 33
Արմավիր	+ 13 + 17 + 32 + 34
Վայոց ձորի լեռներ	+ 6 + 10 + 24 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+ 14 + 17 + 32 + 34
Սյունիքի լեռներ	+ 6 + 10 + 19 + 22
Սյունիքի նախալեռներ	+ 8 + 12 + 27 + 30
Սյունիքի հովիտներ	+ 14 + 18 + 31 + 34
Երեւան	+ 16 + 18 + 32 + 34

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **14.09.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*